

## Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

### **ՀԱՅԱԲԱՐԲԱՌԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԱՅ\*<sup>1</sup>**

1. Ագարակն բրտի գերեզման օտարաց.
2. Բրտի ագարակն զնեցին գերեզման օտարաց.
3. Գնեցին զագարակն բրտի գերեզման օտարաց:

Այսպես է նաև՝ Ղուկ. Ժ. 9 «Եւ բժշկնեցիք որք ի նմա հիւանդը իցեն և ասասչիք նոցա. Մերձեալ է» վկայությունը, որը դրված է թէ՛ Բժշկնեցիք և թէ՛ Հիւանդս բառերի տակ.

1. Բժշկնեցիք որքան (sic) հիւանդ իցեն.
2. Հիւանդս բժշկնեցիք և ասացէք նոցա մեր.

Պարզ է, որ Անդիմակն աշխատել է ճկունությամբ օժտել իր համարարառը՝ երբեմն դրան զոհարերելով բնազրային ճշգրտությունը, նպատակ ունենալով ամեն գնով գտանենի դարձնել որոնված նախադասությունը: Այնու հանդերձ՝ այս երևույթի մեջ պետք չէ շփոթել ձեռագրում նկատվող լեզվական այն ակնհայտնի աղավաղումները, որոնք, ինչպես դիտել տվյալն արդեն, որիշների ձեռքով հետագայում կատարված սրբագրության և ընդորինակումների հետևանք են:

Սրանից մետք հանդես է գալիս Բաղդասար Կ. Պոլսեցու համարարառը, որով սկսվում է հայ տպագիր համարարքաների շրջանը:

1753 թվականին Կ. Պոլսում լուս տեսավ բանասեր-քերականագիտ Բաղդասար դպիր Կ. Պոլսեցու կազմած նորկտակարանային համարարքատը՝ «Ցանկ գիրք Նոր Կտորականին»<sup>2</sup>:

Բաղդասար դպիրն իր ժամանակի հայտնի գիտնականներից էր ոչ միայն որպես հեղինակ երկհատոր Քերականության, որը երեք տպագրության է արժանացել Աույն ԺԼ դպիր ընթացքում, և որից երկերի, այլև որպես բնագրաբան՝ միջնադարյան մատենագրական բնագրերի հրատարակությամբ (Մաշտոց և Հաճախապատում, Կյուրեղ Աղեքսանդրացու, Դավիթ Անհաղթի, Զենոռ Գլակի, Գրիգոր Տաթևացու և Սարգսի Շնորհալու գործերը):

Ի տարբերություն Անանիա Ալլահվերդյանի Համարարքատի, որը միայն շորս Ավետարաններն էր ընդգրկում, Բաղդասար դպիր Համարարքան ընդգրկում էր Նոր Կտորականի բոլոր գրքերը: «Դարձալ՝ ի տարբերություն նախորդի, համարարքառային սույն բառարանը լայն ծավալով չի բերում բնագրական վկայությունները, այլ միայն բարի մեջ եղած շատ փոքրիկ կապակցություններով, բայց ունի խիստ այրքենական դասավորում. Օրինակ՝

\* Ծարունակված «Էջմիածն» ամսագրի 1971 թ. ԺԱ—ԺԲ համարներից:

<sup>2</sup> Տե՛ս «Գրքոյն որ կոչի Ցանկ գիրք Նոր Կտորականին»: Որ պարունակէ յինքան գրան ունան երևելիս, եղալ ըստ այրքենական կարգին հանդերձ համարաթուով գիտոցն և համարացն տղնաւմանց: Առ ի դիրապէս գտանել զոր ինչ և խնդրից ոք բան ի տուր Նոր Կտորականին», Կ. Պոլս, 1753: Տպագրության հիշատակարանում ասկում է. «Եւ արդ՝ նոյն կատարումն տպեցման սորին ի թվիս Հայոց՝ ՌՄԲ (=1753)... ի Կոտանդանուայիսիս բարարի...»:

Ազգաց և լեզուաց	Յայտ. ԺԳ. 7
Ազգաւ ամստաւ	Հոռով. Ժ. 19
Ազգն ըռ և քահա	Յովիթ. ԺԸ. 35
Ազգս ազգս եթէ	Հոռով. ԺԲ. 6

Բներված օրինակները ցույց են տալիս, որ այս համարբառում ևս բաւերը շարք են մտնում իրենց ունեցած քերականական թերումներով: Այս կերպով բարուաշարում համապատասխան տառերի շարքերում տեղավորված են նաև, օրինակ, դերանունների հողոված ձևերը՝ «Խմ եթէ չեր եկեալ» (Հովիթ. ԺԵ. 22), «Խմն քարոզութիւնն» (Բ Տիմ. Դ. 17), «Խմն որ տրուաս եմ» (Եփ. Գ. 8), «Նա է տեղեկացեալ» (Կոր. Լ. 3), «Նմա պարտ է անել» (Յովիթ. Գ. 30), «Նովա հաշուեցու» (Կող. Ա. 20), «Նորա յաշխարհի եմ» (Յովիթ. ԺԸ. 11), «Նորա զազատութիւն խոս» (Բ Պետ. Բ. 19), «Նորօք կատարիր» (Յայտ. ԺԵ. 1), և այլն:

Այս նույն ձևով, օրինակ, գտնում ենք նաև էական բայի խոնարհված ձևերը՝ Եղեալ, Եղեաք, Եղելոյ, Եղեմ, Եղեր, Եղերուք, Եղեւ, Եղէ, Եղէց, Եղէք, Եղիշիք, Եղիցի, Եղիցին, Եղիցուք, Եմք, Են, Էաք, Էիք, Էր, Էք, Լեալ, Լեք, Լերուք, Լինիլ, Լինին, Լինիշիք, Լինիցի, Լինիցին, Լինիցիք, Լիցուք: Հականալի է, որ բայական այս բոլոր բառերն իրենց մեջ միշտ ունեն փոքրիկ կապակցություններ, ինչպես՝ «Եղեալ վասն մեր ան», «Եղեաք նեզք ի մի». և կամ՝ «Եղեւ ամենայն հնազանդ», «Եղեւ ամենայն օրինացն», «Եղեւ բան Տեառն ի վերայ» և այլն:

Սյրբնական շարբում տեղ են գտնել ոչ միայն ինքնուրույն բառերը, ինչպես են, օրինակ, գոյական և ածական անունները, այլն պարագայական համագամանքներ արտահայտող նախդիրները, նախադրությունները, մակրայները, շաղկապները: Այսպես՝ «Զերեսս երկնի կա» (Մատ. ԺԶ. 3), «Զերիս առուր եռ» (Յայտ. ԺԱ. 9), «Ի մեռելոցն յառենք» (Մարկ. Թ. 9), «Ի մեր վարդապետութիւն գր» (Հոռով. ԺԵ. 4), «Յայնմ առոր խնդ» (Յովիթ. ԺԶ. 26), «Առ ի բառնալոյ զմե» (Երր. Թ. 28), «Ընդ անհծիր են» (Գաղ. Գ. 10), «Ըստ միտս կատարել» (Երր. Թ. 9), «Ճորքան ժամանակա» (Հոռով. ԺԱ. 18), «Վասն բազմանալոյ ան» (Մատ. ԻԴ. 12), «Զկնի երթան գա» (Յայտ. ԺԴ. 4), «Իբրև զգորսո բան» (Յայտ. ԺԶ. 13), «Իբրևու լուան որք» (Գործք Լ. 14), «Եւ զի եք դուք որ» (Գաղ. Դ. 6), «Ալլ և մեք իսկ որք» (Հոռով. Լ. 23), «Եթէ իցէ եկեալ ըստ» (Կոր. Լ. 36), «Զի եթէ որ ի ճեռն» (Երր. Բ. 2), «Թէ ե՞րք դառնայց» (Ղոկ. ԺԲ. 36), «Խսկ որ բերէ զփուշ» (Երր. Զ. 8), «Խսպ թէ ոչ և դու» (Հոռով. ԺԱ. 22), «Այսինքն է զիմ ա» (Փիլիմ. Ա. 12), և այլն:

Բաղդասար Կ. Պոլսեցու Համարբառը պարունակում է 10.512 բառվկայություն: Նրա ծավալն սկզբնապես ավելի է Եղել, բայց հեղինակը, հաշվի առնելով տպագրության դժվարությունները, դուրս է բողել մի շարք վկայություններ, որոնք, ինչպես ինքն է ասում, կարող էին գտնվել նաև տպագրությամբ հայտնի որիշ երկերի միջոցով: Նա գրում է.

«Գիտեի է և այս և յոյժ ի միտ պահելի, զի վասն յոյժ հոգ տանելոյս վերոյ համառութեան գրքուիիս, յետ հաւաքմանն մերոյ զիաւարեկիսն ըստ մեր մտաց և դնելոյ ի կարգին, Եղեաք առաջի մեր զբաղդիրքն Արքային և զիին ցանկն մատենական Աստուածաշնչոյն, և զոր ինչ գտաք ի նոսին ի մեր հաւաքելոց, հանաք զայն ի բաց, անկորդ համարելով զգտեալս ի նոսին՝ դնել և յասուս, որպէս առէ Արիստոնէլ՝ թէ աւելորդ է երկոքումք առնել դայն, որ կարէ լինիլ միով» (Էջ 174—175):

Այստեղ հիշատակված երկերից առաջինը Մխիթար Սերաստացու բարանի առաջին հատորն էր, տպագրված 1749 թվականին<sup>54</sup>, իսկ երկրորդը՝ 1783 թվականին նոր հրատարակած Աստվածաշնչի<sup>55</sup> վերջում գտնվող «Յանիկ մատենական»-ն էր, բառացանկ, որն արտատպված էր Աստվածաշնչի 1666 թվականի Ուկանյան հրատարակությունից և որի էությունն արդեն անսանք վերևում՝ Ուկան Երևանցու մասին խոսելիս: Այս երկու հրատարակություններում թենի բնագրական վկայություններ չեն բերված, բայց բառերի դիմաց նշանակված էին Աստվածաշնչի գրքերի համապատասխան գլուխութերն ու տնահամարները:

Բաղդասար Կ. Պոլսեցին իր Համարարքառը կազմելու համար որպես բնագիր օգտագործել է Մխիթար Սերաստացու հրատարակած Աստվածաշնչը, որը հիմնականում Ուկան Երևանցու անհնան սրբագրություններով աղճատված բնագրի վերարտադրությունն էր. բայց նաև երբեմն հայկադրությունը է եղել հայկական հին՝ հարազատ բնագրից ևս առնել որոշ որոշեր՝ երբ դրանցից շատ է տարրերվելիս եղել ուկանան նոր բնագիրը, որպեսզի ընթերցողը չըրկվի դրանք ևս գտնելու հնարավորությունից: Բաղդասար դպիրն այդ մասին գրում է.

«Եւ հին վարդապետքն մեր՝ որ ըստ հնոյն եղեալ են ի գրուածոցն իրեանց, ընթերցողը զնոսա՝ այնպէս պահեալ են ի մտի. և որոնեալ զայն ի ցանկիս, ոչ գտանեն զնոյն ձև, զի այս ըստ նորոյն է հաւաքուած. թէպէտ և զոման եղաք և այնպէս՝ առ ի գտանիլ» (էջ 173—174):

Նշանակում է՝ գիտնական հետիմակն իր աշխատաքի ընթացքում Ուկանյան տպագրված նոր բնագիրը համեմատել է հայկական անտիպ հին բնագրի հետ և պատրաստել ըստ ամենայնի գիտականորեն հօրինված մի համարարքառ՝ ի պետու ուսումնասիրողների. և այդպէս էլ ինքն ասում է, որ այս գիրը «ամենայն կարդացողի ոչ է պիտոյ, այլ միայն գլուց աշակերտաց և բանակը անձանց, որ սէր ունին գրոց գիտութեան» (էջ 175):

ԺԹ դարի առաջին կեսում մեզ մոտ հայտնվել են սուրբգրական մի բանի այլ համարարքառներ, որոնք մնացել են անտիպ:

Նրանցից մեկը ժամանակին պատկանում էր Կ. Պոլսի Հայոց Ազգային Մատենադարանին (Ղալաթիա թաղամասում) և հայտնի էր որպես № 2 ձեռագիր. այդ առումով մենք նրան տալիս ենք «№ 2 համարարքառ» պայմանական անունը: Այդ ձեռագիրն այժմ գտնվում է նույն բաղարի Պերա թաղամասի Ս. Երրորդություն եկեղեցում:

Բարգեն կաթողիկոս Կյուլեսերյանը, որ ժամանակին կազմել էր Ազգ. Մատենադարանի ձեռագրերի ցուցակը, նկարագրել է նաև այս ձեռագիրը<sup>56</sup>:

Տրված Ակարագրության համաձայն՝ «№ 2 համարարքառ»-ն ընդգրկում է Հին և Նոր Կոտակարանները և ամփոփված է երկու ստվար հատորների

<sup>54</sup> «Բարգիրը հայկագիան լեզուի, բաժաննալ լիրկուս հատորս, յորոց յառաջնումն՝ որ է տպագրեալս այս, պարունակիալ զոն լոգանախուուն բազմութիւնք բանից Աստուածաշնչն Գլուց և այլոց նրանից մատնենից լիզուագէս դպրապեստաց...: Արարեալ ի Մխիթարայ վարդապետ Սերաստացու Արքայ Հայր Կոչեցելոյ, աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց», Վենետիկ, 1749:

<sup>55</sup> «Աստվածաշնչ գիրը Հնոց և Նորոց Կոտակարանաց: ...Վերսին տպագրութեամբ ի լոյս ածեցեալ աշխատասիրութեամբ և ջամփիր տեսան Մխիթարայ վարդապետի Սերաստացոյ՝ Արքայ Հայր Կոչեցելոյ», Վենետիկ, 1783:

<sup>56</sup> Բարգեն առումով կաթողիկոս (Կյուլեսերյան), «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային Մատենադարանին Հայոց», Անթիիա, 1961, էջ 9—12:

մեջ, որոնք խորագիր և անվանաթերթ չունեն: Նրա նեղինակն անհայտ է: Գրված է բամբակյա փայլուն թղթի վրա, մանրագոյն նոտրագրով: Խղզի չափը՝  $39 \times 26$  սմ, իսկ գրվածքի չափը՝  $23 \times 19$  սմ: Բաղկացած է 46 պրակ-ներից՝ յուրաքանչյորը 12 թերթ կամ 24 էջ, ընդամենը՝ 552 թերթ կամ 1.104 էջ. էջերը բաժանված են 8-ական սյունակների, ուստի՝ ամրող գործը կազմված է 8.312 սյունակներից: Դժբախտարար նշանակված չէ տողերի բա-նակը, հետևաբար նաև հնարավոր չէ գոնե մոտավոր հաշվով իմանալ, թև չանչ' բայ կամ վկայություն է պարունակում այս համարարրառը:

Սահմանափակ են մեր տեղեկությունները «№ 2 համարարրառ»-ի ընույթի մասին: Դատելով տրված նմուշներից՝ երևում է, որ այս համարար-րառը ևս ունի այրենական հօրինվածք, բայց բառաշարի մեջ մտնող բառերի դասավորման համար այսուեւ կիրառված է բառերի համախմբման մի նոր դրույթում: Եթե, ասենք, Բաղդասար Կ. Պոլսցու Համարարրառում **Ա.ՃՃ** բառով բերվող վկայությունները բաշխված են զանազան տեղերի վրա, օրինակ՝ գ նախդրով եղածները տեղափորված են Զ տառի շարքում («Զան-ձինս ճարակեն», «Զանձն ունայնացուց»), և նախդրով եղածները՝ Յ տառի շարքում («Յանձինս իրեանց», «Յանձն առնեմ ձեզ»), առանց նախդրի եղածները՝ ուղղակի Ա տառի տակ («Անձամբ զանձինս», «Անձանց իր-եանց») և այլն, ապա «№ 2 համարարրառ»-ն այդ բոլորը համախմբում է մի տեղ՝ ուղղակի **Ա.ՃՃ** բառի տակ, դասավորման համար նշանակություն շտալով նախդիներին: Այդ են ցուց տալիս նկարագրողի հաղորդած հետև-յալ նմուշները.

գ-Ա.ՃՃ իր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց	Ցովհ. ԺԵ. 13
գ-Ա.ՃՃ իր դմէ ի վերայ ոչխարաց	Ցովհ. Ժ. 11
յ-Ա.ՃՃ իր, եթէ տրտնշեն վասն այնորիկ	Ցովհ. Զ. 62
զ-Ա.ՃՃ իր, և բարձէ զխաչ իր	Մարկ. Ը. 34
յ-Ա.ՃՃ իր. և վաղվաղակի փառառեսցէ	Ցովհ. ԺԳ. 32
յ-Ա.ՃՃ իր զգօրութիւն, որ եղն ի հմանէ	Մարկ. Ե. 30
զ-Ա.ՃՃ իր կեցուցանել, կորուսց զմա	Մատթ. ԺԶ. 25

Ուրիշ որևէ տեղեկություն չունենք այս համարարրառի յուրահատկու-թյունների մասին: Խոկ ինչ վերաբերում է օրա ներկայացրած վիճակին՝ այդ մասին նկարագրողն ասում է: «Կարծես առաջին գրչէ ելած գործ մըն է որ բառերը լաւ չեն դասաւորուած այրութենական կարգով. թէ՛ նետառաջութիւններ կան և թէ՛ վերջէն յանելուածներ ու սրբագրութիւններ, նոյնիսկ բերուածներ»:

Ուրիշ տեղեկությունների համաձայն՝ Կ. Պոլսի Հայոց Ազգ. Մատենա-դարանում մի ժամանակ կար նույնպես անանուն մի համարարրառ, որը կոչ-վում էր «Բուրաստան խնկոց»: Կյուլեսերյանի կազմած ցուցակում այդ անունը չի երևում, բայց մեզ թվում է, որ «№ 2 համարարրառ»-ը և «Բուրաստան խնկոց»-ը կարող են լինել նոյն ձեռագիրը: Այդպիսի հավանականության համար հիմք է տալիս ոչ միայն այն հանգամանքը, թե երկու ձեռագրերի տեղն էլ Ազգ. Մատենադարանն է, այլև այն, որ նրանց մասին տրված նկա-րագրությունների միջև կան ակնքախ նմանություններ:

«Բուրաստան խնկոց»-ի մասին հետևյալ տեղեկություններն է տվել Թո-ներածական հոդվածում, 1895 թվականին Երուսաղեմում տպագրված համա-ռու քթ. Տեր-Խաչակյան իր «Տեսութիւն ի վերայ համարարրառի Ա. Գրոց» բարբառի սկզբին.

«Յընթացս տպագրութեամ մատենիս յանօթս շնորհեցաւ մեզ յԱզգային Մատենադարանէ Կ. Պոլսի ստուար երկանատոր ձեռագիր ցանկ ամենայն բաղից U. Գրոց: Գիր գրչագրիս է նօտր կոչեցեալն, յոյժ մանր, այլ յստակ և գեղեցիկ, գրեալ ի վերայ հասաւ և կարծր բամբակեայ թոյթոյ: Չիք իմ ուրեք ի նմին յառաջարան կամ վերջարան կամ լիշտակարան և ոչ իսկ անոն զրուածոյն կամ Բեղինակին գտանի ի ճակատի կամ այլ ուր ի գիրս, այլ միայն ի յետ կոյս կազմի իրարանչիոյ հասորոյ ուկեգրով դրոշմալ է Բուրաստան խնկոց: Ե մասին ոճոյ և դասաւորութեան՝ տարբեր ոչ սակաւ ի ներկայ գրուածոյս: Յայտնի տեսանի ի նմա աշխատութիւն եօթն կամ ուր անձանց» և այլն<sup>57</sup>:

«№ 2 Բամբարարառ»-ի և «Բուրաստան խնկոց»-ի մասին տրված նկարագրությունների միջև եղող նմանություններն, ինչպես ասվեց, ակներև են և, ամենայն հավանականությամբ, դրանք միննույն ձեռագիրն են ներկայացնում: Մեզ համար այս մասին տարակուանք պատճառող միակ կետն այն է, թե Կյուլեսերյանը «№ 2 Բամբարարառ» ձեռագիր նկարագրության մեջ ի՞նչպես կարող էր չնշել, եթե նրա երկու հատորների կազմի թիկունքին ուկեգրով դրոշմված լինենի «Բուրաստան խնկոց» բառերը:

«Բուրաստան խնկոց»-ի նկարագրության մեջ ասվում է, որ, ձեռագրից դատելով, այնուել 7 կամ 8 տարբեր անձերի աշխատանք կա: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ «Բուրաստան խնկոց»-ը խմբական աշխատանքի արդյունք է: Մենք արդեն տեսանք, որ ժամանակին կարդ. Հոգուն իր համարարառը կազմենիս գործի է լծիլ 500 և ավելի վանականների: Երևում է, որ «Բուրաստան խնկոց»-ը ևս վանական միջավայրում է ծնունդ առել, իսկ թե ո՞վ է եղեկ նրա նախաձեռնուողը՝ հայտնի չէ:

Տեր-Խամբայշը բավկանին համոզիչ փաստարկումով առաջ է քաշել այն կարծիքը, թե «Բուրաստան խնկոց»-ի հեղինակը պեսք է եղած լինի Դիոնիսիոս վ. Կարապետյանը<sup>58</sup>, որը Երուսաղեմի Ս. Հակոբի վանքի միաբան էր, այնուղ վարել էր ավագ թարգմանի և քարտուղարի պաշտոններ, իսկ 1824 թվականին կարգախոռ էր եղել և ընդունել բողոքականությունը<sup>59</sup>: Այդ կարծիքին է նաև Մկրտչի հապ. Աղավնունին<sup>60</sup>: Եթե այդ կարծիքը հաստատ համարվի, ապա դա մեզ ուժմք կտա ասելու, որ «Բուրաստան խնկոց»-ը կազմվել է Ս. Հակոբի վանքում՝ Դիոնիսիոս վ. Կարապետյանի նախաձեռնությամբ և մի խումբ միաբանների կամ ուսանողների գործակությամբ, նախքան 1824 թվականը:

Այս ժամանակաշրջանից հիշատակվում է նաև Հին և Նոր Կտակարանների մի որիշ համարարառ, Բեղինակություն Հովսեփ վ. Տեր-Ավագյանի: Դրա մասին, սակայն, ավելի է նպատակահարմար խուել 1848 թվականին Զմյունիայում տպագրված անանոն համարարառից հետո, որովհետև կարծիք կա, որ դա կարող է աղբյուր ծառայած լինել Վերջինիս:

Զմյունիայի համարարառը, որը միայն Նոր Կտակարանն է ընդգրկում,

<sup>57</sup> Տե՛ս «Համարարառ Հին և Նոր Կտակարանաց, աշխատահրութիւն Թաղեռ վարապետի Աստուածատուրեան Արապիսիրույն, ի Միաբանութեան. Սրբոց Յակովիանց», Երուսաղեմ, 1895, էջ Ե:

<sup>58</sup> Անդ, էջ Ե:

<sup>59</sup> Մկ. նպ. Աղավնունի, «Միաբանը և այցելուր Բայ Երուսաղեմի», Երուսաղեմ, 1929, էջ 116:

<sup>60</sup> Մկ. նպ. Աղավնունի, «Սուրբ Գրոց ուսումը և անոր սաղիմանալ աշխատաւորները», Հայ Խոսնակ, Բ տարի, 1924/25, էջ 125:

լոյս է տեսել այնուղ հաստատված ամերիկան միսիոնարների տպարանից և կրում է «Համարարքան կամ ցանկ նմանաձայն բառից նորոյ Կոտակարանի» խորագիրը<sup>61</sup>:

Չմյունիայի համարարքառը ևս բառարանային եղանակով է կատուցված, բայց, ի տարրերություն հայկական նախորդ համարարքառների, այստեղ վկայությունները թերված են տվյալ բառին թե՛ նախորդող, թե՛ նաջորդող կապակցություններով: Այսպես, օրինակ, **Մերձենալ** բառի տակ այստեղ Մարկ. Բ. 4 տնից թերված է «Եւ իբրև ոչ կարեկն մերձենալ առ նա» ամրող ջական վկայությունը, որը նախորդների սկզբունքով այլ կերպ չէր լինի, բայց եթե սկսելով միայն մերձենալ բառից՝ «Մերձենալ առ նա՝ յամրոխէ անտի»: Այս **Մերձենալ** բառի տակ է ամփոփված են այն բոլոր վկայությունները, որոնք պարունակում են այդ բառը և նրա թերված ձևերը (մերձենամ, մերձեցա, մերձեցան, մերձեցայք, մերձեցին, մի՛ մերձենար, մի՛ մերձենայք և այլն): Այս դրույթամբ են թերված նաև գոյականներն ու ածականները: Սակայն, եթե հողովան կամ խոնարհման ընթացքում բառի արմատը կամ միմքը կերպարանափոխվում է և կամ փոխարինվում է մի որիշով, այդ դեպքում նոր ձևը, որպես ինքնուրույն բառ, իր սեփական տեղն է ունենում բառաշարում: Այս ձևով համարարքառում որպես ուրույն բառեր են տեղ գրավել՝ Օր-ը (օր, օրու, յօր, յօրէ, ցօր) և Անոր-ը (անորք, անորց, անորը, յանոր, յանորս, յանորց, զանորս, զանորը), ճանաշել-ը (ճանաշեմ, ճանաշչէ, ճանաշէք, ոչ ճանաշելոյ) և ծան(եայ)-ն (ծանեան, ծանեան, ծանիցեն, ծանիչիք, ծանոցենալ, ոչ ծանեար, ոչ ծանիցի): Ամանապես՝ Ռոտել-ը (ռոտեն, ռոտէր, ռոտիչիք, ռոտիչէք, ռոտելոյ, չուտենմք, ոչ ռոտեն, ոչ ռոտիցէ), Կեր-ը (կերան, կերայց, կերիցեն, կերիցէ, կերիցուր, կերայք) և Եկեր-ը («Եկն թշունն երկնից և Եկեր զնա», և այլն): Դերքայական ձևերն ընդհանրապես գնում են, ըստ Վերևում նշվածի, բայական բառերի տակ, բայց երբեմն նաև ինքնուրույն են հանդես գալիս բառաշարում, ինչպես, օրինակ, Գալոց, Եկեալ, Ասացեալ, Կերող և այլն:

Այս համարարքառում տեղ չի տրվել ինչպես նախորդներին ու նախադրություններին, այնպես էլ դերանուններին, մակրայններին, շաղկապներին և գոյականների, ածականների ու բայերի շարքին պատկանող շատ բառերի:

Չմյունիայի համարարքառի համար օգտագործված է Աստվածաշնչի Զոհրապյան հրատարակությունը՝ դասական թարգմանության թերթիրը: Այսպես՝ Գործք Ծ. 33 «Եւ ես իսկ և իսկ յոնցի առ քեզ... առաջի Աստուծոյ կամք» վկայությունն ըստ Զոհրապյանի է տրված՝ Յղեկ և Կալ բառերի տակ, մաս առ մաս, և ոչ թե ըստ Ուկանի, որը դրա փոխարեն ունի՝ «Վաղվաղակի որեմն առաքեցի առ քեզ... առաջի քո կամք»: Սակայն երբեմն, Զոհրապյանի հրատարակության մեջ ցոյց տրված տարընթերցումների հետևողությամբ, Խոկանյան բնագրից ևս թերված են վկայություններ, որոնք անծանոթ են նայկական բնագրին: Այդպիսիներից է, օրինակ, Գործք ԽԸ. 29 «Եւ իբրև զայս ասաց՝ արտաքս գնացին ի նմանէ Հրեայք, որք ունեին ի մեջ ինքնամց զբագում խնդիրա վկայությունը, որը մաս առ մաս տրված է Արտաքս, Հրեայ, Ռնել և Խնդիր բառերի տակ:

Չմյունիայի համարարքառի հետիմակն անհայտ է: Թորոս քի. Տերևահակյանի կարծիքով՝ այս համարարքառը պետք է բաղված և հանված

<sup>61</sup> «Համարարքառ կամ ցանկ նմանաձայն բառից նորոյ Կոտակարանի, այրքենական կարգան շարադասնալ», Չմյունիայի, պատ. Գուլ. Գրիգորի, 1848,

# ՀԵՄԵՐԵՐԵՐԸ

ԿԵՄ

ՅԵՆԻ ՆՄԵՆԵԶԵՅՆ ԲԵՐԵՑ

ՆՈՐՈՅ ԿՏԵԿԵՐԵՆԻ

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԿ ՀԱՐԱԴԱՍԵԱԼ

ԱՐՀԱՆՃԵՐ ՉԳԻՔ-Ի ՅՈՒ Ե. 50 :



Ի ԶՄԻՒ ՌԵՆԱ

Ի ՖՊԱՐԵՆԻ ԿՈՎԱԿԵՐԱՍ ԿՐԻՖ ՖԻՐԻ

1848

Թաղեռ վ. Աստվածատուրյանի համարաբառի անվանաթերթը

լինի «Բորբաստան խմեց»-ից, ուստի և նոր հեղինակությունը վերագրելի է՝ հիմնախոս վ. Կարապետյանին. տակայն, անառարկելի շնամարձելով իր այս կարծիքը, նա ավելացրել է. «Ցանկալի է մեզ ստուգագոյն տեղեկենալ զայս-մանէ ի հաստատութիւն կամ լուղություն կարծեաց մերոց»<sup>62</sup>: Մեր կարծիքով՝ եթե համարավոր լիներ հաստատել «Բորբաստան խմեց»-ի և «№ 2 համարարքառ»-ի նույն լինելը, ապա պարզված կլիներ նաև այս հարցը, որովհետև «№ 2 համարարքառ»-ը, ինչպես տեսանք նոր նկարագրության մեջ, կա-ռուցվածքով ակնհայտորեն տարբեր է Զմյունիայի համարարքառից:

Զմյունիայի համարարքառի հեղինակության հարցը կապվում է նաև Հովսեսի վ. Տեր-Ավագյանի անվան հետ, ինչպես ակնարկեցինք արդեն:

Զմյունիայի տպագիր համարարքառի օրինակներից մեկը, որն այժմ գտնվում է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Կենտրոնական գրադարա-նում (Ա. Ալպոյանցանի ֆոնդ № 105), անվանաթերթից առաջ կրում է հե-տեւյալ ձեռագիր հիշատակագրությունը՝ առանց ստորագրության:

«Ցանկ բոլոր Հին և Նոր Կոտակարանաց արարեալ է ի հայր Յովսէփայ գիտնական վարդապետէ Տեր Առագեան, որ գտանի վասն տպագրութեան ի Պատրիարքարքանին Կոստանդնուպոլսոյ, Եղելոյ ի Մայր Եկեղեցոց տեղույն, կառուցելոյ յանուն Սիրոյ Աստուածածնի. այլ որպէս թոփի ինձ, թողեալ զցանկ Հնոյ Կոտակարանի, զայս ցամաք Նորոյ միայն տպեալ են՝ առանց յառաջարա-նութեան և յիշելոյ զի լոյս ընծայողն սորին, որ էր և է օրինեալ ի յախտեան, ամեն»:

Թե ո՞ւմ ձեռքից է այս հիշատակագրությունը և թե ո՞րքան է հավաստի այս կարծիքը, ըստ որի Զմյունիայի համարարքառը պիտի հանված լինի Տեր-Ավագյանի համարարքառից, չենք կարող ասել: Բայց այստեղ նույնքան և ավելի կարևորն այն է, որ Հովսեսի վ. Տեր-Ավագյանի հեղինակությամբ հօրինված մի համարարքառ տպագրության էր սպասում Կ. Պոլսի Ազգային Պատրիարքարանում՝ դեռ նախքան Զմյունիայի համարարքառի հրատարա-կումը:

Արցախսեցի Հովսեսի վ. Տեր-Ավագյանը հայտնի մանկավարժ և գիտնա-կան էր, որը «Ճոխացոյց զաշխարհն Արցախու քերթողական, Առևտորական, Փիլիսոփայական և աստուածարանական ուսմամբ»<sup>63</sup> և գնահատվել է որպես «առաջին աղքիր լուսաւորութեան Արցախական նահանգի ի վերջին ժամա-նակս»<sup>64</sup>: Մահացել է 1847 թվականին<sup>65</sup>: Հեղինակ է քերականական և մի շարք այլ երկերի, որոնք մեծ մասամբ մնում են անտիպ<sup>66</sup>:

<sup>62</sup> Թ. քթ. Տեր-Խամարականի հիշյալ Առվածը, էջ 2:

<sup>63</sup> Ասրծու վ. Զարաւանց, «Ծանապարթորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Ա, Թիֆ-լիս, 1842, էջ 198:

<sup>64</sup> Անը, մասն Բ, Թիֆլիս, 1858, էջ 855:

<sup>65</sup> Մակար վ. Բարխտստարյանց, «Արցախ», Բաքու, 1895, էջ 179:

<sup>66</sup> Հովսեսի վ. Տեր-Ավագյանի ամտիակ Երկերից մեզ հայտնի են մնական ձեռագրեր՝ Երևանի Պետ. Մատենադարանում,

ա. «Քերականութիւն Բայկազեան լեզուի», ձեռ. № 3620:

բ. «Տետրակ բայի» և «Ցուար», ձեռ. № 2568:

գ. «Գիրք տեսական Փիլիսոփայութեան», ձեռ. №№ 2525, 2828, 2885, 2990, 3619, 4088, 4045, 6558, 6818, 8750:

դ. «Ներածութիւն աստուածարանութեան», ձեռ. № 4045:

ե. «Վահան ուղղափառաց», ձեռ. № 2622:

Ֆապարմած գործ է՝

զ. «Առաջին մասն Փիլիսոփայութեան որ ասի՝ Տրամարանութիւն, համառութեալ ի բուն Տրամարանութեան աստուածարան վարդապետին Կովկասոյ ի 1830 ամի», Շուշի, 1840: Հմտ. Հ. Աթավանց, «Հայկական մատենագիտութիւն», Բան. Ա, էջ 967:

Հովսեփ Վ. Տեր-Ալվագյան Արցախներու հօրինած համարարրատն այժմ չկա Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանի դիվանատանը<sup>67</sup>: Եթե այդ ձեռագիրն իրոք անցել էր Զմյուռնիայի ամերիկան միսիոնարների ձեռքը, այդ դեպքում հարկ կլինի նրանց դիվանում որոնել անհրաժեշտ լուսաբանությունները:

Զմյուռնիայի համարարրատից հետո, 1860-ական թվականների սկզբին, Երուսաղեմի միարաններից Թաղնու վ. Աստվածատուրյանը<sup>68</sup> ձեռնամուխ է լինում Հին և Նոր Կտակարաններն ընդգրկող ծրագրով կազմելու մի նոր համարարրատ, որը յոթնամյա տրնաջան աշխատանքով ավարտվում է 1867 թվականին, բայց 1895 թվականին է միայն, որ կարողանում է լուս աշխարհ գալ Երուսաղեմի տպարանից<sup>69</sup>:

Այս համարարրատը ոչ միայն ընդգրկումով, այլև մակարդակով ավելի բարձր էր քան Զմյուռնիայինը:

Համարարրատի հրատարակման հետ կապված գիտական աշխատանքները վատանիված էին Թորոս քի. Տեր-Խասիակյանին, որի անունն առիթ ունեցանք հիշատակելու վերևուն: Հատորի սկզբին գետեղված էր նրա ներածական հոդվածը՝ «Տեսութիւն ի վերայ համարարրատի Ս. Գրոց»<sup>70</sup>. իսկ ավելի առաջ, 1891 թվականին, նա խմբագրել էր Երուսաղեմի տպարանի անունից մամուլին տրված այն Հայոտարարությունը, որով ուսումնակր հասարակայնությանը կոչ էր արվում օճանդակելու Համարարրատի հրատարակմանը<sup>71</sup>:

Տեր-Խասիակյանի գնահատմամբ՝ այս Համարարրատը խթան էր հանդիսանալու ոչ միայն սուրբրական ուսումնասիրությունների զարգացմանը, այլև հայագիտական հետազոտությունների: Մամուլի Հայտարարության մեջ նա ասում էր, որ «հայկական Աստուածաշիշի Համարարրատն անշափի և անկշռելի օգուտ կրնայ ընծայել ամեն հայագէտի»<sup>72</sup>. իսկ «Տեսութիւն» ներածական հոդվածում, ավելի մանրանամասներով իր այդ կարծիքը, նշում էր, որ Համարարրատը հայագիտությանը մատուցելու է կրնակ ծառայություններ՝ աղբյուրագիտական և լեզվաբանական:

Համարարրատի հայագիտական ծառայությունը նաև լինելու էր այն, որ նմարավորություն էր տալու՝ բացահայտելու մեր միջնադարյան մատենագրության պատմական ո գրական կապերը և գաղափարական առնչությունները Աստվածաշունչ մատյանի հետ: «Չիք ինչ տարակոյս,—գրում էր նա,—զի ուսումնակր մատենագրութեանց նախնեաց և եկեղեցական մատենից մեծապէս օգտեսցին Համարարրատաւ ի ստուգութիւն աստուածեղին բանիցն ի մեջ բերելոց թէ ուստի՝ և յի՞նչ միտս առեալ»<sup>73</sup>: Սա՝ Համարարրատի նշա-

<sup>67</sup> Ընորհակարութեամբ Եշում ենք, որ ընդառաջեկով մեր խմբանքին, Ազգ. պատրիարքարանի դիվանատան պաշտոնյաներից պր. Գ. Բամպուրճանը որոնումներ կատարեց այդ ուղղությամբ, բայց՝ ապարդյուն:

<sup>68</sup> Թաղնու վ. Աստվածատուրյանը ծնվել է 1881 թ. և մահացել 1906 թ., տես Մկ. Խաչ. Աղավնանի, «Միարանը և այցելուք...», էջ 149.

<sup>69</sup> «Համարարրատ Հին և Նոր Կտակարանաց, աշխատասիրութիւն Թաղեւս վարդապետի Աստուածատուրյան Արավկիրցու, ի Միարանութեան Սրբոց Յակովիանց», Երուսաղեմ, 1895:

<sup>70</sup> Տես անդ, էջ 4—Թ:

<sup>71</sup> Այս Հայոտարարության համառությունը տես Բազմագէպ, 1891, էջ 282—283:

<sup>72</sup> Անդ, էջ 282:

<sup>73</sup> թ. քի. Տեր-Խասիակյան, «Տեսութիւն», էջ Ը:

նակության աղբյուրագիտական-քնագրագիտական կողմն էր, որն, իրոք, պայօք էլ կարևոր տեղ է գրավում հայուշութության պատմա-քանափրական մետաղությունների քնագավառում:

Իսկ Համարարքառի խճվարանական-քերականական հշանակության մասին Տեր-Խանակալյանը գրում էր. «Հիր ինչ տարակոյս զի որք զնայ լնզու հնտութեամբ և կատարելութեամբ ուսանել բաղձան, պարտին և զՀայկական Աստուածաշունչն գէթ իրու հնազոյն և ընտիր մատենագիր՝ ուշի ուշով քննել և ուսումնասիրել, զնարագասութիւն ոնց և դարձուածոց լնզուի ի նմանէ ստուգել և այնու հաստատել», ուստի և «պիտանի և սատարիշ վարկանելի է այնոցիկ որ զԳիրն ուսանիցին յաղագ յատակութեան և հարազատութեան լեզուին», այսինքն՝ «նշանակութիւնը բառից և կիրառութիւն նոցին նովիմբր իսկ բաղդատութեան օրինօրն հաստատեալ օշոյն» և «այսու ձեռնոտութեամբ քերականական համաձայնութիւնը որոշին, այլ և այլ կիրապութիւն յատուկ անուանց և օտար բառից և օրէնք տառադարձութեան նոցին սահմանին»<sup>4</sup>: Այլ խոսքով՝ դասական հայերենի օրինաչափությունների ուսումնասիրման ուղիներից մեկն էր ցուց տրվում այստեղ:

Հայերեն սուրբգրական համարարքառների պատմության մեջ առաջին անգամն էր, որ ուշադրություն էր հրավիրվում այն օգուտների վրա, որ Աստվածաշնչի համարարքառը Շերկայացնում էր հայագիտության համար:

Այս համարարքառը հօրինվածքով նման է Զմբոնիայի համարարքառին: Վերջինիս մասին խոսելիս՝ բառերի դասավորման համար նրա կիրառած հիմնական սկզբունքներից մեկը մենք պարզաբանեցինք Մերձենալ բառի օրինակով: Այժմ այստեղ փոխանակ ասելու, որ «այս Մերձենալ բառ տակ էլ ամփոփված են այն բոլոր վկայությունները, որոնք պարունակում են այդ բառը կամ նրա թերված ձևերը» (տես վերևում), մենք ուղղակի կրերենք Մերձենալ բառի տակ ամփոփված 289 վկայություններից մի քանի նմուշներ:

## ՄԵՐՁԵՆԱԼ

- |              |                                 |
|--------------|---------------------------------|
| Ծնն. ԺԲ. 11. | Մերձեցաւ Աբրամ մտանել յեզիպտու. |
| Ի. 4.        | Արիմելէք ոչ Մերձեցաւ ի նա.      |
| Ի. 6.        | Ոչ ևսու... Մերձենալ ի դա.       |
| ԻՀ. 41.      | Մերձեցին ատորք կարեաց.          |
| ԼԵ. 16.      | Մերձեցաւ ի Քարրարա երկիր.       |
| Ելք.         | Եթէ Մերձենայ տեսանել.           |
|              | Մի' Մերձենար այսը.              |
| ԺԲ. 48.      | Ապա թէ Մերձենայցէ առ ձեզ.       |
| ԺԲ. 49.      | Որ գայցէ Մերձենալ ի ձեզ.        |
| ԺԹ. 12.      | Ամենայն որ Մերձեսցի ի լիառնն.   |
| ԺԹ. 13.      | Մի' Մերձեսցի ի մա ձեռն.         |
| ԺԹ. 15.      | Ի կանայս մի' Մերձենար.          |
| ԺԹ. 21.      | Գուցէ Մերձենայցեն հայել.        |

Հասկանալի է, որ այս նոյն սկզբունքով են դասավորված նաև գոյականներն ու ածականները: Օրինակ՝

<sup>4</sup> ԱՅՀ, Եջ Թ:

# ՀԱՄԱՐԴՐԱՎԾ

ՀԵԽ ԵԽ ՆՈՐ

## ԿՏԱԿԱՐԱԿԱՑ

ԱՇԽԱՏԱՎԻՐՈՒԹՅՈՒՆ

ԹՈԴԵՈՈ ՎԱՐԴԱԳԵՑԻ ԱՍՏՈՒԺԱՌԱՆՔԵՐՆ ԱՐԴԳԵՐՑԻԱՑ  
Ի ՄԵՐՈՒՆՈՒԹԵՆՔ ԱՐԲՈՑ ՅԱԿՈՎՐԵԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ա. ԷՉՈՒԱՌՆԻ

S. S. ՄԿՐՏՉԻ Ա.

ԿԱՐՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

### ՃՐԱՄԱՆԴ

ՎԱՏՐԻԱՐՔԻ ՄՐԲՈՑ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՅՈՒՐԱՒԹԻՒՆ


ՄՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՒՆ

ԵՒ

Ի ՎԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԱՆՈՒԹՈՒՑՈՑ

S. ՄԱՏԹԵՈՍԻ

ՄՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՒՆ



Ի ՑԱՐԱՆԻ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԱԲՈՈՈՑ

ՄՐԲՈՑ ՅԱՆԱՋՐԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

**1895**

## ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ

- Գործք ԻԲ. 28. Բազում գլուց զՁինուրութիւնս զայս.  
 Ա. Կորճ. Ա. 18. Զգեղնացիկ Զինուրութիւնն.  
 Բ. Կորճ. Ժ. 4. Զի զէն Զինուրութեամ մերոյ.

## ԽԱՐՏԵԱԾ

Դ մազոյն.

- Հետ. ԺԳ. 36. Մի՛ դարմանեսցէ բահանայն վասն Խարտեաշ  
 Ա. Թագ. ԺԷ. 42. Զի էր պատանեակ Խարտեաշ.

Ի տարբերություն Զմյունիայի համարարրատի՝ այս համարարրառում նոյովման ու խոնարհման ընթացքում բառերի կրած կերպարանափխումնեւրը և կամ փոխարինումնեւրը մեկը մյուսով՝ չեն դիտվում որպես բառային տարրեր միավորներ, այլ ամփոփվում են մեկ՝ հիմնական բառի տակ: Հոյովման դեպքերում հիմնական է համարվում բառի եզակի ուղղական ձևը (անեզական բառերի համար՝ հոգմակի ուղղական ձևը), իսկ խոնարհման դեպքերում՝ անորոշ դերքայը: Օգտագործելով մենց այն միևնույն օրինակները, որ Եշեցինք Զմյունիայի համարարրատի մասին խոսելիս՝ տաենք, որ այստեղ Ասուր-ը բառային առանձին միավոր չի կազմում, այլ գնում է Յոր բառի տակ:

## ՕՐ

- |         |        |                                     |
|---------|--------|-------------------------------------|
| Ա. Մակ. | Է. 46. | Անկան յայնմ Ասուր.                  |
|         | Է. 48. | Արարին զթոն զայն տարեկան մեծ.       |
|         | Է. 50. | Լուաց երկիրն Յուղայ Ասուրս քանի մի. |
|         | Ը. 10. | Կացուցին մինչն յօրս այս.            |

## Լամ'

- |         |         |                             |
|---------|---------|-----------------------------|
| Ա. Թագ. | ԻԸ. 20. | Զի ոչ Եկեր հաց գտին ողջոյն. |
|         | ԻԸ. 28. | Ոչ կամեցաւ Ռոտել.           |
|         | Լ. 11.  | Ետում նմա հաց և Կերաւ.      |
|         | Լ. 16.  | Ռոտէին և ըմպէին և տօնէին.   |

Այս նույն սկզբունքով էլ, դարձյալ, Երաց, Երեր, Երաց, Երող, Ելաց, Ելից, Ելոյծ, Եհաս, Եհար, Եհեղ, Եջ և նման բայական ձևերը, որոնք Զմյունիայի համարարրառում որպես ինքնուրույն բառեր էին տեղավորված, այստեղ գնում են Բանալ, Բներել, Թանալ, Թողով, Լալ, Լոռվ, Լուծանել, Հասանել, Հարկանել, Հեղով, Իջանել բառերի տակ:

Դասավորման վերոնշյալ սկզբունքներն, ի հարկն, գիտականորեն ճիշտ են: Հեղինակը քերականագիտական հասկացողությամբ՝ է առաջնորդվել՝ բառերի խմբավորման ու դասավորման իր սկզբունքները մշակելիս:

Զմյունիայի համարարրատի համեմատությամբ, ինչպես ասվեց, այս համարարրառն ունի որպես անվական անվիճելի առավելություններ: Ունի նաև թերություններ, որոնցից մի քանի մասին իր ժամանակին խոսվել է «Արարատ» ամսագրի անառուն գրախոսության մեջ<sup>75</sup>:

Թերություններ ու բառերի պակասներ՝ անշուշտ ունի այս համարարրառը: Պակասներն զգալի են հատկապես դերանունների և շաղկապների բնա-

<sup>75</sup> Արարատ, 1896, էջ 111—112:

գավառում: Նախտինները (զ, ի, ց, առ, ընդ, ըստ) նույնպես չկան բառաշարում, թեև նախդիրներով կտպակցված որոշ բառեր տեղ են գտել այնուղի (Զմուռ ածել, Առ ական, Առ աչօք, Ընդ ակամք հայել, Ընդ վայր բարկանել, և այլն): Թեև ընդգրկված է մակրայների մի մասը (Արդէն, Արտարս, Արտաքոստ, Արտաքոյ, Խսկ և խսկ, Խսկոյն, Հազիւ, Ակամայ և այլն), բայց շատ մակրայներ բացակայում են (Անդ, Աստ, Երբեմն, Երբեք, Երբեւ, և այլն): Երբեմն նույնիսկ պատահում է, որ եղած բառի տակ բացակայում է այս կամ այն վկայությունը, թեև, մեր կարծիքով, այդպիսի պակասների թիվը մեծ չէ:

Այնու ամենայնիվ պիտի ասեմ, որ այս համարարրառն իր ժամանակի համար լուրջ և գիտական առումով նվաճուի երկույթ էր: Վերոնշյալ թերությունները կարող են էական նշանակություն ունենալ լեզվաբանների համար՝ նայ լեզվի ուսումնասիրության հարցերում. բայց մատենագրական ուսումնասիրությունների համար նրա մակրադարձ կարող էր հիմնականում բավարար համարվել՝ առ ի չգոյն լավագույնի: Ենու այսօր էլ միշնադարյան նայ գրականության աղբյուրագիտական հարցերով զբաղվող բանասերներն անհրաժեշտորեն նրա օգնության են դիմում ամեն բայլափոխում պարզելու համար, թե այս կամ այն գրվածքում օգտագործված այս կամ այն վկայությունն Աստվածաշնչի ո՞ր մասից է բերված և ի՞նչ նպատակով:

Այս համարարրառը նիմնված է Զոհրապյանի հրատարակած դասական հարազատ բնագրի վրա:

Սուրբարական համարարրառների հայկական պատմության մեջ ժամանակով նորագույնը աշխարհարար համարարրառն է, որը 1963 թվականին լույս է տեսել Բեյրութում<sup>76</sup>: Ընդերկում է Հին և Նոր Կտակարանները:

Այս համարարրառը նիմնված է նայ բողոքականության համար պաշտոնապես ընդունված արևմտահայ այն թարգմանության վրա, որն առաջին անգամ 1853 թվականին տպագրվել է Զմյունիայում, ամերիկան միսիոնարության տպարանում, այնուհետև անժիվ հրատարակություններ է ունեցել որոշ սրբագրություններով և այսօր էլ շարունակում է անընդհատ վերաբերարակվել հայկական Սփյուռքում: Այս թարգմանությունը կատարվել է երրայլական և հունական բնագրերից, ուստի և կապ չունի Եղարի մեր դասական գրաբար թարգմանության հետ:

Ինքը ըստ ինքան հասկանալի է, որ աշխարհարար համարարրառը հայագիտական առումով չի կարող ունենալ այնպիսի նշանակություն, ինչպիսին ներկայացնում են Աստվածաշնչի գրաբար բնագրին նվիրված համարարրները, քանի որ միշյալ աշխարհարար Աստվածաշնչը մեր ժամանակներում չունի կատարելիք, նույնիսկ նեռավոր հմանությամբ, այնպիսի դեր, որպիսին կատարել է անցյալում գրաբարը: Նա չունի կասեր մեր կյանքի պատմական ընթացքի հետ, մեզ դեպի մեր պապան առաջնորդող գաղափարների ու տեսակետների հետ, մեր գրականության ու գիտության հետ: Պատմականորեն նա ոչ մի առնչություն չունի ժամանակակից հայության հոգևոր ու մշակութային կյանքի հետ, որովհետև, դարաշշանի պայմանների թերնամք իսկ, չէր կարող նրան տրված լինել հայության ազգային լուսավորության ու առաջադիմության փարու դառնալ, նրա մտքի խոյանքների հա-

<sup>76</sup> «Համարարրար Աստուածաշնչ մատենանի Հին և Նոր Կտակարանաց, արդի աշխարհարարով: Աշխատասիրեց Վեր. Վահան Գ. Սահակեան», Բեյրութ, 1963:

մար ներշնչման ու ոգեշնչման աղբյուր դառնալ, ինչպես իր ժամանակին դադել էր գրաքար թարգմանությունը՝ բազմաթիվ սերունդների համար։ Պատճառն այն է, որ գրաքար թարգմանությունը ներքին ազգային պահանջներով ու շանքերով էր կյանքի կոչվել՝ ազգային նպատակներով, մինչ աշխարհաքար թարգմանությունը արտաքին օտարի պահանջներով ու շանքերով է կատարվել՝ օտար նպատակներով<sup>77</sup>։ Այդ իսկ պատճառով՝ նա ոչ միայն կատարելիք պատմական որևէ դեր չէր կարող ունենալ հայության կանքում, այլև, նույնիսկ, ինքը չկարողանալով համընթաց քայլել ու զարգանալ նրա հետ, եթե է մնացել նրա արևմտյան գրական լեզվի զարգացման ժամանակակից մակարդակից։ Կարելի է արևմտահայ այդ թարգմանության Բնյութի 1963 թվականի տպագրությունից<sup>78</sup> բերվող մի քանի օրինակներով ակներև դարձնել այդ իրողությունը։

Հարաբերյալի և հարաբերական դերանվան տրամարանական կապը բացակայում է, օրինակ, նետույալ նախադասությունների մեջ։

«Հապա Աստուած իր ընտրեալներուն իրառունք պիտի չընէ», որոնք ցույնեւ ու գիշեր իրեն կ'աղաղակեն» (Ղուկ. Ժ. 7)։ Պետք է լինի՝ Իսկ Աստուած արդարութիւն պիտի չընէ՝ իր ընտրեալներուն, որոնք տիւ և գիշեր կ'աղաղակեն իրեն։

«Հարիւրապեսի մը ծառայ ծանր հիւանդացած՝ մօտ էր մեռնելու, որ սիրելի էր անոր» (Ղուկ. Է. 2)։ Պիտի լինի՝ Հարիւրապեսի մը ծառան, որ սիրելի էր անոր, ծանր հիւանդ էր և մահաներձ։

Քերականական օրենք շնանչող նախադասություն է՝

«Պարզ պիտի տեսնես քու եղօրդ աշքին մէջի շիող համելու» (Ղուկ. Զ. 42)։ Անկապ և անիմաստ է՝ տեսնել շիող համելու։

Եզակի ենթակայի նետ քայի նոգնակի ձևի կիրառման օրինակներ են՝

«Բոլոր ժողովուրդը իրեն կու զային» (Մարկ. Բ. 18)։

«Բոլոր ժողովուրդն ալ տեսնելով՝ զԱստուած կը գովարանէին» (Ղուկ. Ժ. 43)։

«Ճամ բազմութիւն անոր ետևէն գացին» (Մարկ. Գ. 7)։

Բայական ձևերի միայ ուղղագրման և դրա նետնանքով եղանակների ու ժամանակների շփոթման նմուշներ են տալիս նետնյալ նախադասությունները.

«Երանելի է այն մարդը որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չքայլեր, ու մեղասորներուն ճամբուն մէջ չկենար, և ծաղը ընողներուն նստած տեղը չնստիր» (Մարկ. Ա. 1)։

«Եւ ան որ իր խաչը չառներ ու իմ ետևէս գար» (Մատթ. Ժ. 38)։

<sup>77</sup> Անգլիական և ամերիկան միսիոնարական կազմակերպությունների շանքերով կատարված այդ թարգմանության որպես նեղինակներ հանես են զայիս միսիոնարներ Էջեր (J. B. Adger), Դուայտ (H. G. O. Dwight), Հոմը (H. A. Homes) և Ռիգզ (Elias Riggs), որոնք ունեցել են նաև «օգևականներ»։ Հմտ. T. H. Darlow and H. F. Moule, „Historical Catalogue of the Printed Editions of Holy Scripture in the Library of the British and Foreign Bible Society”, vol. II, New York, 1953, p. 94-98. «Պատմական ակնարկ Աստուածաշնչի թարգմանութեանց վրայ» (Թրատ Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերացության), Նյու-Յորկ, 1953, էջ 18-30։

<sup>78</sup> «Աստուածաշնչ» գիրք Հիմ և Նոր Կոտակարանց», Բնյութ, 1963։ Հրատարակույթն Ամրձակոր Արևների Աստվածաշնչի Ընկերությունների (The Bible Societies in the Near East)։

Այս չքալեր, չկենար, չնստիր, չառներ ծեսը սխալ նմ. պիտի լինեն՝ չի քալեր, չի կենար, չի նստիր, չ'առներ:

Թարգմանիշներն այս տեղերում ժխտական ձևն օգտագործելիս իրար են խսունել սահմանական ներւայի և զալի Յ-րդ դիմքը և ըղձական եղանակի անցյալի ապառնի եզակի Յ-րդ դիմքը: Հմմտ. ճիշտ ձեսը.

### Ս ա հ մ ա ն ա կ ա ն ե ղ ա ն ա կ

#### Ներկա

Չեմ բալեր	Չեմ կենար	Չեմ նստիր	Չեմ առներ
Չես բալեր	Չես կենար	Չես նստիր	Չես առներ
Չի բալեր	Չի կենար	Չի նստիր	Չ'առներ

### Ե ղ ձ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

#### Անցյալի ապառնի

Չքալէի	Չկննայի	Չնստէի	Չառնէի
Չքալէիր	Չկննայիր	Չնստէիր	Չառնէիր
Չքալէր	Չկննար	Չնստէր	Չառնէր

Եթե դժվար է համարվում կողմնորոշվել բայերի խոնարհման այս տրամաբանական ընթացքով, ապա կարենի է կողմնորոշվել նաև բայի արտասանական շեշտադրությամբ: Սահմանականում՝ ժխտականով խոնարհվող բայի օժանդակն է շեշտվում (չի) կամ, վերջինիս աղվելու դեպքում (չ'), բուն բայի առաջին վանկը. չի՝ քալեր, չի՝ կենար, չի՝ նստիր, չ'առներ: Իսկ ըղձականում՝ բայի վերջին վանկն է շեշտվում. չքալէ՛ր, չկենա՛ր, չնստէ՛ր, չառնէ՛ր:

Եվ դարձյալ՝ արևմտահայ գրական լեզվի համար խորթ և անընդունելի ձեւեր են նետևյալները.

«Անոնց վրայ» (Ղուկ. Ժ. 7), փոխանակ՝ անոնց հանդէպ:

«Անոր վրայով» (Ղուկ. Ե. 15), փիս. անոր մասին:

«Այս բանին վրայով» (Ղուկ. Ժ. 1), փիս. այս մասին:

«Ասկէ ետես» (Ղուկ. Ե. 10), փիս. ասկէ յետոյ:

«Քանի մ'օրէն ետես» (Մարկ. Բ. 1), փիս. քանի մը օր յետոյ:

«Նմանապես՝ «երիկ» (Ելք. Ի. 22), «որբեարի» (Ելք. Ի. 21), «վայեր» (Առակ. Ի. Զ. 1), և այլն, փոխանակ՝ ամուսին (այր), այրի, վայելնել:

Այսքանը բավական է տեսնելու համար, որ տվյալ թարգմանությունը լեզվի տեսակետից ևս մեկուսի է մնում մեր կյանքուն:

Այսպիսով, եկեղեց բոլոր հանգամանքներից, գտնում ենք, որ Աստվածաշնչի հիշյալ թարգմանության վրա հիմնված աշխարհաբար համարարառը էական նշանակություն չի ներկայացնում հայագիտության առումով: Այդ համարարառը կարող է միայն նշութեր տալ արևմտահայ աշխարհաբարի պատության որոշ հարցերի ուսումնասիրության համար և հատկապես ծառայել արևմտյան հայերենով տարածվող բողոքական գրականության լեզվի հատկանիշներն ուսումնասիրելու:

Մինչև այստեղ մեր ներկայացրած թարգմանական և ինքնուրույն համարարտաները բոլորն էլ երևան են եղել Հին և Նոր Կոտակարանների բնագորային ուսումնասիրության հողի վրա, և դա, ի հարկե, շատ բնական էր, քանի որ սուրբգրական գիտությունները, ինչպես միջնադարյան բրիստունական աշխարհում ընդհանրապես, այնպես էլ Հայաստանում, հասարակության հոգևոր ու նյութական մշակույթի բոլոր թեկերի մեջ անխօնի կապերով կապված էին: Այդ երևույթը հասարակության զարգացման օրինաչափությունների մասն էր կազմում: Ինչպես արդեն տեսանք իր տեղում՝ միայն ԺԹ դարի վերջերին՝ Թաղեռու վ. Աստվածատուրյանի Համարքարափ հրատարակության առիթով է, որ որոշակիորեն հանդես եկավ այն գաղափարը, թե հայկական Աստվածաշնչի համարքարափ կոչված էր բացառիկ դեր կատարելու նաև հայերեն դասական լեզվի հետազոտության ասպարեզում և ընդհանրապես հայագիտության մեջ: Այս գաղափարն արդեն շատ ինքյան նոր բնույթ էր հաղորդում հայկական Աստվածաշնչի համարքարափին՝ այն տեղափոխելով դեպի աշխարհիկ գիտությունների բնագավառը: Այս առումով՝ հայկական Աստվածաշնչի համարքարափ գաղափարն առաջնակարգ նշանակություն էր ստանում հայագիտության համար: Այդ հարցին մենք կվերադառնանք սույն աշխատության վերջում:

Սրանով ավարտվում է հայ համարքարառային գրականության այն հանգընվանը, որը բացառապես շնորհանում էր սուրբգրական բնագրային հետազոտությունների գծով, ինչպես եղել է առհասարակ այն ժողովուրդների մոտ, որոնք միջնադարում ունեցել են բրիստունական գրականություն:

(Օարունակելի)

